№ 144 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 5 1903 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 5 № 144

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ»
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

1903 Թւին

12 ամսվանը	10 րուբլի
11 »	» »
10 »	9 »
9 »	8 »
8 »	7 »
7 »	6 »
6 »	» »
Մնացածները ամսական	1 »

Եւրոպայում՝ 30 ֆր., Ամերիկայում՝ 6 դոլլար, Պարսկաստանում՝ 10 ր.

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Мшакъ".

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Նախապատրաստութիւն ապագայի համար. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջանների պ. պ. հոգաբարձուներին. Զանգեզուրի հանքագործների ժողովը. Բաթումի Քսանհնգամեակը. Նամակ Երևանից. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շաբթէ-շաբաթ.

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

Ներկայ գարնան մենք նախազգուշացրինք, որ օդերևութաբանների կարծիքով պէտք է տեղի ունենայ օդի ցրտութիւն և որ այդ պատճառով կարող են առաջ գալ մի շարք դժբաղդութիւններ մի գիւղական ժողովրդի համար: Դա մեր ենթադրութիւնն էր, որ մենք հաղորդեցինք վերապահութեամբ, նպատակ ունենալով պատրաստել մարդկանց մտքերը, որպէս զի, եթէ կարող են, դժբաղդութեան առաջն առնեն, իսկ եթէ այդ անկարելի է, հնար ունենան մեղմացնել դժբաղդութեան հետևանքները, օրինակ, փչացած ցանքսերի տեղում ցանեն նոր բոյսեր և այդպիսով մասամբ մաքառեն պատահած վնասների քայքայիչ ազդեցութեան դէմ:

Դժբաղդաբար մեր հաղորդած ենթադրութիւնը ճշդվեց և այն էլ իրական կեանքում շատ սուր արտայայտութիւն առաւ: Ամբողջ գիւղեր զրկվեցին իրանց այգիների, արտերի և բանջարանոցների արդիւնքներից, իսկ մի քանի տեղերում նոյն իսկ խոտից և արօտից: Ամենից շատ վնասներ հասցրեց կարկուտը, իսկ յետոյ հեղեղները և քամիները:

Կախեթում, ուր այս տարի կանոնաւոր կերպով փորձեր էին անվում մաքառելու կարկուտի դէմ թնդանօթների միջոցով, եկան բարեբեր հետևանքներ: Թնդանօթների միջոցով աջողվեց ցրվել կարկտաբեր ամպերի բազմաթիւ կուտակումներ և ազատել այգիները անխուսափելի վտանգից: Կախեթի այգետէրերը օրէցօր աւելի ու աւելի ընտելանում են թնդանօթների միջոցով մաքառելուն և կազմվում են ընկերակցութիւններ թնդանօթներ ձեռք բերելու և կանոնաւոր կազմակերպութեամբ մաքառման գործը առաջ տանելու: Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը վերցրել էր իր վրա միջնորդի դեր և բերել է տալիս թէ Ռուսաստանի գործարաններից և թէ արտասահմանից թնդանօթներ, յարմարեցրած կարկտաբեր ամպեր ցրվելու համար:

Այժմ անցնում է տարին և այլ ևս ուշ է թնդանօթներ ձեռք բերել այս տարվայ համար: Բայց հետևեալ տարիների համար պէտք է ձեռք առնել նախապատրաստական միջոցներ: Ուստի մենք խորհուրդ կը տայինք մեր այն գիւղատնտեսներին, որոնց ցանքսերը յաճախ ենթարկվում են կարկտի վնասաբեր ազդեցութեան, ձմեռվայ ընթացքում լաւ ծանօթանային մաքառման այս նոր եղանակի հետ և հետևեալ գարնանից զինվէին, ինչպէս հարկն է, ազատվելու գիւղատնտեսի այդ կորստաբեր թշնամիներից մէկից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ Պ.Պ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻՆ

(յունիսի 28-ին 1903 թ.)

Վերջին ժամանակներս ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ սկսեցին աւելի յաճախ ստացվել զեկուցումներ ուսումնաշրջանային վարչութիւններից այնպիսի փաստերի վերաբերմամբ, որոնք վկայում են կարգապահութեան անկումը միջնակարգ դպրոցներում և մասամբ քաղաքային դպրոցներում, այդ դպրոցներից մի քանիների աշակերտների սանձարձակութեան, նոյնպէս և մտքի վնասակար ուղղութեան մասին, որ յաճախ նկատվում է բարձր դասարանների աշակերտների մէջ: Պատահել է, օրինակ, որ ամբողջ դասարանի աշակերտները հրաժարվում էին կատարել ուսումնարանական իշխանութեան կարգադրութիւնները և այդ ժամանակ գործում էին խմբովին. եղել են կոպիտ և յանդուգն վարմունքներ աշակերտների կողմից անբաւարար թւանշաններ, նկատողութիւններ կամ ներշնչումներ ստանալու առիթով ուսուցիչներից. եղել են դէպքեր, որ աշակերտները ուղղակի յարձակվել են մանկավարժական պերսօնալին պատկանող անձանց վրա և վիրաւորանք են հասցրել նրանց, խփելով. վերջապէս ցուցմունքներ կան, որ բարձր դասարանների աշակերտների մէջ ընդարձակ չափերով հակակառավարչական պրօպագանդ է շարունակվում, որ ծնեցնում է ոչ-պակաս զոհեր մի այնքան անմիտ, որքան և յանցաւոր շարժման:

Այդ տեսակ տխուր փաստերի մասին մինիստրութեան մէջ ստացվող զեկուցումներից երևում են յաճախ ուսումնարանական վարչութեան և մանկավարժական խորհուրդների թուլութեան պարզ նշանները՝ մատնացոյց արված չարիքի դէմ կռւելու գործում: Ստուգված է, ի միջի այլոց, որ ուսումնա-դաստիարակչական պէրսօնալի անձինք համարեա ոչինչ ուշադրութիւն չեն դարձնում աշակերտների անքաղաքավարի ընթացքի վրա փողոցներում և հասարակական տեղերում. իսկ եթէ մի դպրոցի ծառայողներից որ և մէկը նկատողութիւն է անում համապատասխան դէպքում մէկ ուրիշ դպրոցի աշակերտին, այն ժամանակ այդ վերջինի իշխանութիւնը այդպիսի գործողութիւնը ոչ թէ ցանկալի երախտագիտութեամբ է ընդունում, այլ դժգոհութեամբ: Ամենահազւադէպ բացառութիւններով խորհրդակցութիւններ չեն կազմվում մի և նոյն քաղաքի մէջ գտնվող միջնակարգ դպրոցների դիրեկտորների միջև միասին քննելու համար այն հարցերը, որոնք վերաբերում են աշակերտների արտաքոյ-դպրոցական ընթացքի վերահսկողութեանը: Կանոնները չեն բացատրվում աշակերտներին, և նրանց յամառ խախտումը անպատիժ է մնում: Աշակերտները կարողացել են ընտելանալ այն մտքին, որ աչկարայ ծխելը փողոցներում, հագուստի սահմանված ձևի խախտումը, հոգաբարձուին, տեղական նահանգապետին և մինչև անգամ գեներալ-նահանգապետին գլուխ չը տալը այնպիսի չեղումներ են կանոնների պահանջներից, որ թոյլ է տալիս լռութեամբ ուսումնարանական իշխանութիւնը յամենայն դէպս, սիստեմատիկաբար անպատիժ են մնում, որովհետև ուսումնարանական վարչութեան մէջ ծառայողները, կարծես վախենալով վիրաւորանքներից, չեն համարձակվում յանցաւորներին պատասխանատուութեան ենթարկել:

Այլ ևս տանելի չը համարելով իբրև այդպիսի դրութիւնը և արքայական կամքի, այն է երիտասարդութեանը դպրոցում սկզբնական տարիներից կարգի և դիսցիպլինայի ընտելացնելու անշեղ պարտականութեան վրա խստորէն ուշադրութիւն հրաւիրելով այն մարդկանց, որոնց այդ վերաբերում է, պարտք եմ համարում նկատել, որ միջնակարգ դպրոցների իշխանութիւնների և մանկավարժական խորհուրդների տրամադրութեան տակ բաւարար միջոցներ կան ազդելու համար աշակերտների վրա, թէ զանազան րէպրէսիվ միջոցներ գործադրելու մասով նրանց վերաբերմամբ, որքան այդպիսի միջոցները անհրաժեշտ կը համարվեն, նոյնպէս և մանկավարժական ազդեցութեամբ դաստիարակչական ցանկալի հետևանքներին հասնելու համար:

Որ բացառապէս պատժիչ միջոցներով չէ կարելի կանգնեցնել դիսցիպլինայի անկումը, դա, ի հարկէ, անկասկած է: Բայց այդ ամենևին չէ նշանակում, որ դպրոցի ուսումնարանական-դաստիարակչական օրգանները պէտք է իրանց թուլութիւնը հասցնեն ուղղակի անհոգութեան: Ցաւելով պէտք է խոստովանել, որ յաճախակի իրանց անտարբեր վերաբերմունքը դէպի աշակերտների պախարակելի ընթացքը դպրոցական վարչութեան պատկանող անձինք բացատրում էին ոչնչով չարդարացնվող ցուցմունքով Թագաւոր Կայսրի ամբողջ ռուս հասարակութեան համար յիշատակելի խօսքերի վրա՝ գեներալ-ադիւտանտ Վանովսկու անունով 1901 թւի մարտի 25-ին տրված հրովարտակի մէջ՝ թէ դպրոցն սրտագին հոգացողութեամբ պէտք է վերաբերվի դէպի իր աշակերտները: Իւրաքանչիւր բարեխիղճ մանկավարժի համար ակներև պէտք է լինի, որ հէնց սրտագին հոգացողութեան համար՝ դաստիարակվողների բարոյական առաջադիմութեան մասին պէտք է արթուն և յամառ կերպով կատարել յայտնի օրէնքի պահանջները, որոնց ենթարկվելը միայն կարող է ընտելացնել պատանուն՝ յարգանք տածել դէպի օրինականութիւնը: Նմանապէս սրտագին հոգացողութիւնը աշակերտների բարոյական զարգացման մասին պարտք է դնում դաստիարակի վրա՝ զարթեցնել իր ժամանակ երիտասարդութեան մէջ անձնական պատասխանատուութեան զգացմունք կատարած յանցանքների համար, և ուրեմն, պատշաճաւոր դէպքերում դիմել խստութեան միջոցներին, որ խնամքով համակերպված լինի յանցանքի աստիճանի և ուղղվելու ընդունակութեան հետ: Երբ վերջապէս մանկավարժական ժողովը կը համոզվի, որ գործ ունի գիտակցական թշնամութեան հետ դէպի կանոններով սահմանված կարգը և աշակերտի պարզորոշ կատաղութեան հետ, որի վրա մինչև միջնակարգ դպրոցի դասընթացքն աւարտելը չը ներգործեցին ոչինչ ներշնչումներ և բարեացակամ խորհուրդներ, այն ժամանակ դպրոցը ոչ միայն իրաւունք ունի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱԲԹԷ-ՇԱԲԱԹ

Բելգրադում կատարված արիւնահեղ անցքերը, Պետր Կարագէօրգեւիչին թագաւոր հրատարակելը և եւրօպական պետութիւնների վերաբերմունքը դէպի այդ բոլորը, ահագին տպաւորութիւն են գործել, որպէս ամենուրեք, այնպէս և մեզնում:

Պարտքատէրերը այդ անցքերի ազդեցութեան տակ մոռանում էին իրանց պարտամուրհակների ժամանակը, ամուսինները մտքերից հանել էին ընտանիքին ամարանոց տանելու պահանջը, խոհարարները համարձակ կողոպտում էին իրանց տէրերին և ճաշին՝ փոխանակ խորոված գառի—տալիս էին վաթսուն տարեկան եզան միսը տապակած, կառապանները առանց վրդովվելու լայն ճանապարհը թողած ձեզ տանում առուներն են գցում, վաճառականի գործակատարը ձեզ ութ արշինի տեղակ վեց արշին չիթ է միայն չափում, իսկ հաշւապահը՝ ձեզնից տաս արշինի փող է վերցնում. և երբ դրանց բոլորին նկատում ես իրանց արած սխալները՝ ասում են.

—Եղբայր, այդ Սէրբիայում եղած անցքերը գլխիս խելք թողել են, որ իմանամ թէ ինչ եմ անում...

—Ասա թէ ինչու այս բոլորը տեսնելուց, դրա արդիւնքը իմ կաշւիս վրա զգալուց յետոյ, ես եկայ այն եզրակացութեան, որ ի զուր տեղն է մամուլը մտրակում, մեղադրում հասարակութեանը անտարբերութեան մէջ դէպի իր շուրջը կատարվող երևոյթները:

Ոչ, հազար անգամ ոչ:

Հասարակութիւնը ոչ քնած է և ոչ էլ անտարբեր, անզգայ, այլ ինքնամոռացութեան հասած հետաքրքրութեամբ հետևում է ոչ միայն իր շուրջը կատարվող երևոյթներին, այլ հեռու, շատ հեռու երկրներում իսկ տեղի ունեցած չարն ու բարին ցնցում են նրան, անհանգստացնում են և ստիպում են մոռանալ և պարտք, և պաշտօն և պահանջ...

Օրինակների համար հեռուն չը գնանք:

Ահա և մեր Տէր Տէրենցը՝ Ամբակում աղան. Նա վաճառական է, կապալառու, բանկերից մէկում խորհրդի անդամ է, պարապում է վաշխառութեամբ, յարգված է որբազան առաջնորդից, մի ժամանակ հոգաբարձու էր և այլն և այլն:

Պատահեցի նրան փողոցում:

—Հը°, ինչ կայ Ամբակում աղա, բարև ձեզ:

—Ի՞նչ պէտք է լինի... դեռ էլի բան լինի... խեղճ Ալէքսանդր, խեղճ մարդ, խեղճ մարդ... և էն էլ ինչ մարդ—թագաւոր, օծված, մեռոնված, զօրքի, թոփ-թվանքի տէր, կնիկը, սիրուն կնիկը կողքին նստում է, ընթրիք է անում խեղճը, ուտում են խմում, ուրախանում, պառկում են քնելու և... էն անաստվածները գալիս են, մտնում, գազանի նման կոտորում են իրանց թագաւորին, իրանց հաց, իրաւունք, պատիւ, անուն տվողին... բա այդպէս էլ բան կը լինի, դա Աստուծու դատաստան է...

—Բայց, Ամբակում աղա, չէ որ հազար ու մէկ բաներ են պատմում նրա մասին, չէ որ իր կնոջ խելքովն էր նստում, վեր կենում, առարկում եմ ես...

—Սուտ է, դրանք բոլորը սարքովի բաներ են, բա թագաւորը էն օֆիցէրների չափ էլ բան չէր հասկանում... Կախել, բոլորին կախելն էլ քիչ է... ախ, թէ ես թագաւոր կը լինէի, տես ինչ էի անում դրանց գլխին...

Մեզ մօտեցաւ մի պաշտօնեայ.

—Ասացէք խնդրեմ, Նատալիան քանի տարեկան է հիմա:

—Նատաշէս... Նատաշէս տասնևութ տարեկան հազիւ լինի... տէր Ցարութիւնն է կնքել, նրա առաջին մկրտութիւնն էր, լաւ կնունք արեցինք...

Մենք ծիծաղեցինք:

—Ես, ես Նատալիա թագուհու մասին եմ հարցնում, բացատրեց պաշտօնեան:

—Դէ այդպէս ասա, հեր օրհնած, ես հէնց իմացայ Նատաշիս համար ես հարցնում, մտածեցի, չը լինի թէ լաւ փեսացու է գտել:

—Չէ, ես Սէրբիայի թագուհի Նատալիայի դարդին եմ. գիշերը պառկել եմ և մտածում եմ Սէրբիայի մասին, նրանց նոր թագաւորի մասին. քունս չէ տանում. մի կողմից մոծակները, միւս կողմից այդ Պետր Կարագէօրգիեւիչը. յանկարծ միտս մի բան եկաւ. ասում եմ, եղբայր, այդ Պետրը կնիկ չունի ինչ է. յիսուն, յիսունհինգ տարեկան է, ուրեմն դեռ ջահէլ է, իսկ Սէրբիան թագուհի չունի. մտածում եմ, ինչ լաւ կը լինի այդ Պետրը գայ ու էն Նատալիին առնի. ինքը սիրուն կնիկ, (53 կան. կառ. մաս.) այլ մինչև անգամ պարտաւոր է վերջին դասարանի համապատասխան աշակերտին չը թոյլ տալ վերջնական քննութիւններ տալու իր տհաս բարոյականութեան պատճառով։ Այդ միջոցը, բացի անխուսափելի զսպող ազդեցութիւնից աշակերտների ընթացքի վրա, նրա կանոնաւոր և զգոյշ գործադրութեան դէպքում, օգտակար կը լինէր և այն տեսակէտով, որ բարձրագոյն դպրոցները կազատվէին իրանց անկրթութեամբ պարծեցող, հետևաբար, դիտմամբ ոչ-կուլտուրական տարրերից։

Դիմելով գործողութեան այն եղանակների քննութեանը, որոնցով մանկավարժական մարմինը կարող է նպաստել վերև յիշած տխուր երևոյթների առաջն առնելուն և մասնաւորապէս պահպանել աշակերտին, որպէս զի նրա մէջ երևան չը գայ այն խրոխտացող և գայրացկոտ տրամադրութիւնը, որին նա, օտար ագիտատորների ազդեցութեան տակ, հեշտութեամբ ենթարկվում է այժմ դպրոցների բարձր դասարաններում, ես պէտք է նախ և առաջ անեմ կտրական պահանջ, որ ուսուցիչները և իշխանաւոր անձինք աշակերտներին դիմելու ժամանակ չը թոյլ տան իրանց կոպիտ և վիրաւորական նկատողութիւններ անելու։ Պէտք է ուղղել աշակերտի սխալ կամ անաջող պատասխանը հանգիստ, գործնական եղանակով, ծաղրի առարկայ չը դարձնելով աշակերտին, չը գայրանալով կամ կծու խօսքեր չը թոյլ տալով իրան։ Վարժապետի և դպրոցի գլխաւորի խրատի իւրաքանչիւր խօսքից աշակերտը պէտք է այն տպաւորութիւնը դուրս բերէ, որ նրա հետ խօսում են պարտականութեան զգացմունքով և նրա լաւութեան մասին հոգ տանելով. ոչ ուսումնական պահանջների լրջութիւնը, ոչ խստութիւնը վարքի գնահատութեան մէջ, ոչ կտրական եղանակը կոպտաբեր կարծիքների դատապարտութեան մէջ չը պէտք է կորցնել տան ուսուցչին իր կատարեալ անձնիշխանութիւնը և աշկարայ բարեացակամութիւնը դէպի աշակերտը։ Թէ դպրոցում առաջին անգամ զգացած անարդարութիւնը, նոյնպէս և պատանու մէջ մարդկային արժանաւորութեան հասունացող զգացմունքի վիրաւորանքը կարող է նրա հոգու մէջ ցցել անվստահութեան սերմ դէպի այն ընդհանուր կազմը, որի մերձաւոր արտայայտութիւնն է նրա աչքում դպրոցը, որտեղ նրան դաստիարակում է պետութիւնը։

(Կը շարունակվի)

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Ամսիս 4-ին առաւօտեան ժամը $9^{1}/_{2}$-ին գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ կայացաւ Զանգեզուրի շրջանի հանքագործների ժողովի շարունակութիւնը նախագահութեամբ ինժիներ Շվաչկինի։ Բացակայում էին երկրագործութեան նախարարութեան կովկասեան ներկայացուցչի օգնականը և «Кавк. Горн. Тов.» ներկայացուցիչը։

Նախկին նիստի արձանագրութեան ընթերցումից և վաւերացումից յետոյ ժողովը դիմեց ծրագրի մնացած կէտերի քննութեան, որը սկսվեց ծրագրի 26 յօդուածից։ Այս յօդուածը յարմար դատվեց վերածել 24-ի, որի հետ նա կապ ունէր։ Այս յօդուածը խօսակցութեան առիթ տուեց այն կողմից, թէ ինչպէս պէտք է վարվել այն դէպքում, երբ խորհրդի մէջ անկարելի է լինում ներկայ եղողներից լրացնել բոլոր պաշտօնեաների թիւը, քանի որ ներկայումս մասնակցողների թիւը շատ քիչ է։ Երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովականները վճռեցին այդ դէպքում ժողովի համաձայնութեամբ հրաւիրել նաև այն հանքագործներին, որոնք ցենզ չունեն և նոյն իսկ օտարներին։ Մէկը առաջարկեց ընդունել վերջիններից միայն իբրև վերստուգող յանձնաժողովի անդամների. սակայն այդ առաջարկը չընդունվեց։

Հետևեալ 25-երորդ կէտը ընդունվեց առանց փոփոխութեան։ Այս կէտը վերաբերում է պաշտօնեաների ընտրութեան, նրանց գործունէութեան տևողութեան և նրանց վերընտրութեան։ Պաշտօնակատարները ընտրվում են ժողովի կողմից և մնում են իրանց պաշտօնում մինչև յաջորդ ընտրութիւնները։ Մի և նոյն պաշտօնեաները կարող են կրկին վերընտրվել նոյն պաշտօնի համար։ Ընտրութեան ձևին վերաբերութեամբ որոշվեց կատարել նրան փակ ձայնատուութեամբ և ընտրված համարել նրան միայն, ով կը ստանայ քուէների մեծամասնութիւն։ Այնուհետև պարզվեց, որ աւելի արդարացի կը լինէր, եթէ ընդունվի գցած քուէների թիւ կէսը, որովհետև շատ դէպքերում մարդիկ ձայնատուութեան չեն մասնակցում, բայց այն ինչ ժողովին մասնակցում են։

Հետևեալ 27-րորդ կէտով ձայնի իրաւունք ստանում է նա, ով պարապում է իր կամ կապալով վերցրած հանքերի շահագործումով կամ հում նիւթի հալելով։ Իսկ այդ տեսակ անձնաւորութիւններ ներկայանում են նրանք, որոնք Կովկասի հանքային վարչութեան կողմից ճանաչված են իրաւատէր։ Այն հանքագործները, որոնք ուրիշին կապալով են տուել իրանց հանքերը և գործարանները զրկվում են ձայնատուութեան իրաւունքից յօգուտ կապալառուի։ 28-րորդ կէտով հանքագործները իրաւունք ունեն մի քանի հոգի միանալ և կազմել մի ձայն, որին և յանձնվում է ներկայացուցչութիւնը։ Այդպիսիներին հաւատարմաթուղթ յանձնելիս պարտաւոր են իրանց ստորագրութիւնը վաւերացնել կամ ժողովին մասնակցող երկու անդամների ներկայութեամբ և կամ օրինական ճանապարհով։

Հետևեալ 30-րորդ կէտը տաք վիճաբանութեան առարկայ դարձաւ այն պատճառով, որ նրանով վճռվում էր ձայների քանակութիւնը և ծախսերին մասնակցելու չափը։ Հարկաւոր էր ընտրել մի այնպիսի չափ, որը ուշադրութեան առնէր թէ գործարանատէրերի և թէ հանքեր շահագործողների շահերը։ Այս հարցի բաւարար լուծման առաւել նպաստեցին կառավարութեան այն ներկայացուցիչները, որոնք շատ անգամ են մասնակցութիւն ունեցել նոյնանման ժողովների, ինչպիսին է Բագուի նաւթարդիւնաբերողների ժողովը։ Նրանք առաջնորդվում էին ներկայումս միմիայն ճշմարտութիւնը պաշտպանելով, մինչդեռ հանքատէրերը ղեկավարվում էին իւրաքանչիւրը իր շահի տեսակէտով։

Երկար վիճաբանութիւնից յետոյ որոշվեց ձայների քանակութիւնը որոշել հալած պղնձի հետևեալ քանակութիւնից. 1—5 հազար պուդ հալած պղնձի համար որոշել մի ձայն, 10,000 պուդի 2 ձայն, 20,000 պուդի համար 3 ձայն և այլն. դրա համեմատ էլ պիտի մասնակցեն ծախսերի մէջ։

Հետևեալ երկու կէտերը ընդունվեցին անփոփոխ։

Ժողովը փակվեց ժամը $1^{1}/_{2}$-ին։

ԲԱԹՈՒՄԻ ՔՍԱՆՈՒՀԻՆԳ ԱՄԵԱԿԸ

(Նամակ Բաթումից)

Այն տեղը, ուր այժմեան Բաթումն է, յայտնի էր դեռ ևս շատ հին ժամանակներում։ Յայտնի է յունական գրող, Արրիան Ֆլաւի (97—180 Ք. յ.),—բազմաթիւ փիլիսոփայական, պատմական և աշխարհագրական գրվածքների հեղինակը, յիշում է այժմեան Բաթումի տեղը փոքրիկ Բաթա քաղաքը, որ Ադրիան կայսրի ժամանակ (117—138) յայտնի էր Բաթիս անունով և ծառայում էր հռոմայեցիների համար իբրև պատերազմական կայարան։ Կան մի քանի տեղեկութիւններ, որոնք վկայում են, թէ Բաթումը յայտնի է եղել դեռ ևս 400 տարի Քրիստոսից առաջ և հռետոր Դէմոսթէնը այդ տեղից էր։

Աւելի մօտ ժամանակներում Բաթումը պատկանել է զանազան ժողովուրդների, որոնց ձեռքն է անցել ամբողջ երկիրը, որը առաջ կոչվում էր Կոլխիդա, ապա Լազիստան և վերջապէս Գուրիա։

1549 թ., երբ Անդրչօլօկեան Գուրիան անցնում է Թիւրքիային, Բաթումում հիմնվում է թիւրքական միջնաբերդ։ Դրանից յետոյ գուրիէլներին մի քանի անգամ աջողվում է Բաթումը թիւրքերից յետ առնել, բայց ընդմիշտ թողնել իրանց ձեռքում անկարելի է լինում։

Վերջապէս 1878 թ., համաձայն Բեռլինի դաշնագրի 58-րդ յօդուածի, Բաթումը անցնում է Ռուսաստանին։

Նոյն թւի օգոստոսի 28-ին ռուսաց զօրքը մուտք է գործում Բաթում։

Բաթումը այդ ժամանակ ներկայացնում էր մի փոքրիկ, կեղտոտ թիւրքական գիւղ, մի քանի փայտեայ տներով և ողորմելի խրճիթներով։ Բնակիչներն էին աջարցիները և լազերը, որոնք զբաղվում էին միայն մաքսանենգութեամբ և աւազակութեամբ։

Անցել է այդ օրվանից 25 տարի և ողորմելի թիւրքական գիւղը դառել է մի բաւական մեծ և գեղեցիկ եւրօպական քաղաք, լայն և մաքուր փողոցներով, էլէկտրական լուսաւորութեամբ, գեղեցիկ շինութիւններով, հրաշալի այգիներով և բազմաթիւ գործարաններով։ Բացված են մի շարք արական և իգական միջնակարգ ու տարրական դպրոցներ, որոնցից մի քանիսը ունեն սեփական շինութիւններ։

Իր բարենպաստ կլիմայով Բաթումը կարելի է համեմատել Նիցցայի հետ։

Համեմատ տարվայ եղանակների, տեմպերատուրան այստեղ հետևեալն է.

Ձմեռ.	7, 5°
Գարուն.	11,94°
Ամառ.	22, 8°
Աշուն.	16,68°

Բարձր միջին տեմպերատուրան տարվայ մէջ և օդի չափազանց կակղութիւնը իրաւունք են տալիս Բաթումը դասել կլիմայաբուժարան կայարանների թւում։

Աշնան սկզբներից մինչև գարնան վերջերքը հաւաքվում են այստեղ բաւական մեծ թւով կրծքի հիւանդութիւն ունեցողներ։ Իսկ ամառը շատերը գալիս են ծովում լողանալու համար։

Մեծ և յարմար նաւահանգստում կանգնած են միշտ տասնեակ շոգենաւեր և բազմաթիւ առագաստանաւեր ու զանազան նաւակներ։ Դա արդէն ապացոյց է, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի Բաթումը իբրև առևտրական և արդիւնաբերական մի քաղաք։

Առաջիկայ օգոստոսի 28-ին Բաթումը տօնում է իր քսանուհինգամեակը։ Ի պատիւ այդ օրվայ քաղաքը որոշել է շինել թատրօն, կուրզալ և բացել մի շարք տարրական դպրոցներ։

Մինչև այժմ Բաթումը չունի մի օրինաւոր թատրօն։ Մեր երկաթէ թատրօնը, որը երբեմն երբեմն երկաթի պահեստ է եղել—կատարեալ բալագան է։ Ըստ պահանջի կամ թատրօն են դարձնում կամ ցիրկ։ Վերջապէս թէ հասարակութիւնը և թէ դերասանները ազատված կը լինեն այն անյարմարութիւններից, որ գալիս է մեր պատմական «երկաթէ թատրօնը»։

Եւ ահա, շնորհիւ իր աշխարհագրական դիրքի, Բաթումը այդքան մեծացել և բարեփոխվել է ընդամենը 25 տարվայ ընթացքում,—շատ կարճ ժամանակամիջոց մի քաղաքի զարգացման համար, ի հարկէ եթէ աչքի չառնենք ամերիկական քաղաքները, որոնք բուսնում են սունկի պէս։

Ար. Մակարեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունիսի 30-ին

Երևանում դեռ զգալի շոգեր չեն անում, այդ պատճառով էլ ամարանոց չտապողներն այնքան բազմաթիւ չեն։ Երեկոները շատ զով է անցնում։ Տեղական լեզուով՝ ամեն երեկոյ ժամի 9-ից մինչև 11-ը փչում է «Բօրիազը», այսինքն հիւսիսային քամին, որի կտրվելուց յետոյ տօթ է լինում և իրանց գործն են տեսնում Երևանի հռչակաւոր մլակները, այսինքն փոքրիկ մոծակները։ Երեկոները հասարակաց այգում բազմաթիւ զբօսնողներ են լինում երկու սեռից։ Բացի քաղաքային այգուց՝ հասարակաց զուարճութեան համար 2—3 նոր այգիներ են պատրաստել, որտեղ երեկոները մեծ բազմութիւն է հաւաքվում և ուր լինում է երաժշտութիւն, այն է՝ քաղաքային ժողովարանի այգին և մասնաւոր մարդկանց պատրաստածները՝ «Արփաչայ», «Ղարաչայ» և «Տարօնչայ» անուններով։ Սակայն ցերեկները քիչ-շատ շոգ է անում. այդ պատճառով էլ զբօսնողները շատ քիչ են լինում այնտեղ։

Քաղաքում աւելի երեկոներն է կենդանութիւն տիրում, իսկ ցերեկները քաղաքը թողած-փախածի տպաւորութիւն է թողնում։ Կէսօրին նկատվում է ընդհանուր թմրութիւն, թուլացնող տրամադրութիւն, նիրհ։ Նիրհում են երբեմն կառապանները կառքերի վրա, գործակատարները, կամ խանութի աշակերտները խանութների առաջ, ապա վաճառականները խանութի ներսում, արհեստաւորները արհեստանոցներում, մի - երկու անգործ բանւոր քաղաքային այգում և այլն, թերևս անքնութիւնից։ Բայց յարատև կենդանութիւն է տիրում նոր շինութիւնների վրա բանող մշակների և վարպետների մէջ։ Նրանք եռանդով բանում են, օրվայ որ ժամին էլ կամենաք։ Նրանք չունեն քուն, հանգստութիւն, մինչև անգամ չը գիտեն, թէ ինչ բան է հանգիստ սրտով ճաշելը։ Նրանց համար կարծես շոգ, թմրութիւն առած բաները գոյութիւն

խելօք, թագուհութիւն արած, փորձված, հազար ու մի ծանօթ, բարեկամ ունի Սերբիայում, Փարիզում... ինչ, վատ բան կը լինի... մտածում եմ, մտածում ու տեղիս մէջ շուռ ու մուռ եմ գալիս... բայց չը գիտէի, թէ Նատալիէն քանի տարեկան կը լինի հիմի։

—Կարծեմ, քառասունից փոքր ինչ անց...

—Դէհ, էլ ինչ ես ուզում... Աստուած վկայ, շատ լաւ բան կը լինի, եթէ էդ Պետրը խելք ունենայ՝ անպատճառ կը պսակվի Նատալիի հետ։

Ամբակում աղէն մեզ չէր լսում, մի քանի այլ փայտ էին տանում, նրա ուշք ու միտքը այն կողմն էր։

Գրավաճառ Գուլումեանցը լրագրի համարը ձեռքին վրա հասաւ։

—Այ, կը տեսնէք, թէ ինչ դուրս կը գայ. եւրօպական պետութիւնները քարուքանդ կանեն ողջ Սերբիան, այդ գործը անպատիժ չէ կարող մնալ, սուլթանը իր զօրքը Ալբանիայից—Բելգրադ կուղարկէ և բոլորին կախաղան կը բարձրացնէ... այդ սերբերը, դուք նրանց չէք ճանաչում, շատ լիրբ ժողովուրդ են, շատ. ես մի սերբ ծանօթ ունէի, հիւրանոցում, Վարշավայում երեք րուբլիս առաւ, կերաւ... ես այդ օրվանից ատեցի այդ ժողովրդին։

Գուլումեանցը այնքան վրդովված էր խօսում, որ նրան հակառակելը անմտութիւն կը լինէր։

—Չէ, ես այդ չը գիտեմ, բայց շատ լաւ կը լինի, թէ Նատալիան գնայ այդ Պետր Կարագէօրգիևիչին, շատ լաւ բան կը լինի, կրկնում էր պաշտօնեան։

—Դուք գիտէք, որ Ավակումովիչը հայ է—դիմեց Գուլումեանցը մեզ։

—Ոչ, ձեզ ո՞վ ասաց այդ.

—Ինչպէս չէ. նա Օվակիմեանց է. ասում են պօլսեցի է, կինն էլ հայ է։

—Ո՞վ ասաց ձեզ։

—Ոչ ոք, ես այդպէս եմ կարծում, թէ չէ սերբերի մէջ Ավակումովիչ ինչ գործ ունի... անպատճառ հայ է—հաստատում էր Գուլումեանցը։

—Տեսնես, եթէ ես գնամ այնտեղ, ինձ մի լաւ պաշտօն կը տա՞յ նա—լրջօրէն հարցրեց պաշտօնեան։

Ուսուցիչ Բաբեանը պատասխանեց այդ հարցին.

—Պաշտօն տալը՝ կը տայ, միայն հարցը նրանումն է, որ սերբիական գանձարանը նոյնպէս դատարկ է, որպէս իմ գրպանը. գրած էր, թէ պետական գանձարանում 20 հազար ֆրանկ է միայն եղել, իսկ եօթանասուն միլիոն պարտք։

—Ուրեմն այդ հաշւով մեր Բագուն Սերբիայից հազար անգամ հարուստ է։

—Ի հարկէ, ի հարկէ հարուստ է—հաստատեց ուսուցիչը։

Դեռ երկար շարունակվում էր քաղաքական բնաւորութիւն կրող այս խօսակցութիւնը, որին միացան մի քանի ուրիշ անձինք. վիճեցին տաք տաք, ողջ Եւրոպային խառնեցին միմեանց, շարժեցին տեղից Բիսմարկի ոսկորները, յիշեցին Գլադստօնին, քննադատեցին Կարագէօրգիին, մեղադրեցին Միլանին, գովեցին Նատալիայի գեղեցկութիւնը, պարսաւեցին նրա կաթօլիկութիւն ընդունելը, պատերազմ հրատարակեցին Բօլգարիայի և Յունաստանի մէջ, ջարդեցին երկրորդին, ահագին կոնտրիբուցիա բարձեցին նրա վրա, քշեցին թուրքերին մինչև Բօսֆորը, գահ բարձրացրին Պետր Կարագէօրգիևիչի որդուն, կազմեցին նոր մինիստրութիւն Սերբիայում, գեներալութեան աստիճան տուեցին Ալէքսանդրին սպանող սպաներից շատերին (եղան կարծիքներ նրանց նոյն իսկ Սիբիր աքսորելու) և վերջի վերջոյ եկան կազմեցին հետևեալ որոշումը՝

Ա. Ընդունել Պետր Կարագէօրգիևիչի գահ բարձրանալու օրինաւորութիւնը։

Բ. Ձեւականօրէն պատժել յեղափոխութեան մասնակցող օֆիցերներին, բայց մի տարուց տալ նրանց բարձր պաշտօններ, իսկ Մաշինին և Միչիչին արձան կանգնեցնել Բելգրադում։

Գ. Հաստատել դաշնակցութիւն Սերբիայի, Բօլգարիայի և Չերնօգօրիայի մէջ՝ ընդդէմ Թիւրքիայի։

Դ. Ազատել Մակեդոնիան, տալով նրան ինքնավարութիւն։

Ե. Խոյս տալ եւրօպական պատերազմից և

Զ. Բոլորը գնան իրանց տները ճաշելու և հանգստանալու։

Ահա այս միջազգային-քաղաքական որոշումներից յետոյ ցրվեցին ներկայ եղողները։

Միւս օրը գրեթէ նոյն մարդիկ ժողոված այստեղ կայացրին ուրիշ որոշումներ, կազմվեց քաղաքական այլ կօմբինացիա...

Իսկ սատրճանաւորը միշտ էլ կրկնում էր.

—Աստուած վկայ, շատ լաւ կը լինէր, եթէ Պետրը առնէր Նատալիային։

Սարո-Պէտ

չունեն։ Այդպէս է թելադրում փողի ոյժը, որով շահագործվում է մարդկային ֆիզիկական կազմվածքը։

Ի դէպ. պէտք է ասել, որ այս տարի քաղաքում բազմաթիւ նոր տներ և խանութներ են շինվում և այդ՝ Երևանում հաստատված բանկի շնորհիվ։ Քաղաքն սկսել է գեղեցկանալ և զարդարվել նորանոր շինութիւններով, որոնցից աչքի են ընկնում մանաւանդ արքունի բանկը, պալատը, հայոց նոր եկեղեցին ս. Լուսաւորիչ անունով և ռուսացը, որ շինված է քաղաքի կենտրոնում, քաղաքային այգու հարաւային կողմում եղած հրապարակի վրա և որը կօծվի առաջիկայ սեպտեմբերին։ Շուտով պէտք է շինվի Աստաֆեան փողոցի վրա ռուսաց ուսուցչական սեմինարիայի համար սեփական շինութիւն։

Քաղաքը զգալի փոփոխութիւն է կրել. հետզհետէ լայնացնում են փողոցները՝ յետ ու առաջ շինած տները հաւասարեցնելով և մայթերը նեղացնելով։ Բացի այդ՝ նորանոր փողոցներ են բաց անում և նոր մայթեր են շինում։ Կանօնաւորում են և քաղաքի առուները։ Սալում են առ այժմ քաղաքի ամենայայտնի Աստաֆեան փողոցը, որտեղից պէտք է անցնէ և ձիաքարշը, որ յանձն է առել անցկացնել ընկերութեամբ տեղական ճարտարապետներից մէկը, Միրզայեան ազգանունով։ Այդ փողոցն առաջինն է Երևանում իր լայնութեամբ և երկարութեամբ. նրա մեծ մասը լուսաւորված է նոր ձեի՝ Գալկինի լապտերներով։ Այդ տեսակ երեք լապտեր են շինել նաև քաղաքային զբօսարանում, ուր առաջներում երեկոները կուրացնող մթութիւն էր տիրում։ Ուշք են դարձնում և միւս փողոցների լուսաւորութեան վրա, մանաւանդ կենտրօնական փողոցների, որոնցից նշանաւոր են՝ Նազարեան, Բէբութեան և արքունական փողոցները, ուր համեմատաբար աւելի է եռում կեանքը։ Լուսաւորութեան կողմից Երևանն էլ առաջվայ Երևանը չէ։

Երևանն իր դրական կողմերի հետ ունի և բացասական կողմեր։ Երկաթուղու շնորհով այժմ Երևանում էլ չէք գտնի նախկին տարիների էժանութիւնը՝ թէ մթերքների և թէ սենեակների. մի խօսքով՝ ապրուստը թանկացել է։

Ամառը գալուն պէս՝ բացվում է և մարդասպանութիւնների սէզօնը։ Մինչև այժմ յունիսի մէջ 4—5 մարդ են սպանել։ Մարդասպանութեան հերոսները մեծ մասամբ մահմեդական տարրից են, այդ անկուլտուր տարրից, սակայն հայերն էլ յետ չեն մնում նրանցից. կարծես նրանց դափնիները հանգիստ չեն տալիս հայերին։ Գինին իր դերն է խաղում, որովհետև Երևանում այնքան դպրոցներ չէք գտնի, որքան գինետներ։ Հասարակական բարքերի կրթարանների փոխարէն, ինչպէս են՝ դպրոցներ, թատրօններ, գրադարաններ, թանգարաններ և այլն, այդ կարգի հիմնարկութիւններն են բազմանում, եթէ միայն կարելի է հիմնարկութիւն անունը տալ նրանց։ Այդտեղ են կրթւում և փորձում իրանց քաջութիւնը տեղական լեզուով՝ իգիթութիւնը և խմելու ընդունակութիւնը Երևանի մատաղ ոյժերը։ Դրանց առաջը կարելի էր առնել տեղական ոյժերով, բայց ո՞վ է հաւատում տեղական ոյժերին. մարգարէն պատիւ չունի իր գաւառում։ Հասարակական բոլոր ասպարէզներում աշխատում են ճնշել և ստորակացնել տեղական ոյժերին, հեռացնելով նրանց և գրաւելով նրանց տեղերը։

Այդպէս է նաև դպրոցական ասպարէզում։ Տեղական կրթված ոյժերն իրանց բախտը որոնում են ուրիշ ասպարէզներում, կամ աստանդական կեանք են վարում, այն ինչ Երևանի թեմական դպրոցն իրանց համար կթի կով են շինել զանազան գիւղերի անկիւններից եկած մի քանի տգէտ պորտաբոյծներ։ Սակայն թողնենք այդ. մեզ հեռու կը տանի։

Յիշած երևոյթի, այսինքն գինետների առաջն առնելու համար տեղական երիտասարդ ոյժերը, Թիֆլիսի օրինակին հետևելով՝ մերթ ընդ մերթ կազմակերպում են հանրամատչելի ներկայացումներ, որոնք նոյնպէս քիչ-շատ կենդանութիւն են տալիս տեղական կեանքին և ժողովրդի համար կրթութեան միջոց հանդիսանում։

Խ. Բաքայեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

Գետաբէկ, յունիսի 23-ին

Կիրակի, յունիսի 22-ին, Գետաբէկ եկաւ կառավարութեան ուղարկած երկրաչափը, որ սկսած ամսիս 24-ից 3 օր պտտեց Զարեքի անտառում, որոշեց նրա սահմանները և վերջնականապէս հաստատեց այդ անտառը Զարեքի վրա։

Երեքշաբթի՝ 24-ին, երեկոյեան այստեղ եկաւ Կաթողիկոսի դիւանապետ Կորիւն վարդապետը, Դիլիջանի ծխատէր քահանայի հետ։ Նրանց ուղարկել էր Վեհափառը Դիլիջանից՝ ստուգելու Զարեքի վանահօր դէմ լսվող գանգատների ճշտութիւնը. ուստի արժ. հայր Կորիւնը տեղիս մի քանի երիտասարդների ուղեկցութեամբ շրջեց Զարեքի անտառը, նայեց կտրատած տեղերը։

Տէր Աստուած, որպիսի աւերածութիւն— Հէնց որ մտնում ես անտառը, իսկոյն աչքիդ է զարկում բազմաթիւ կտրատած մատաղ ծառերը, որոնք տնկված են վանքը տանող ճանապարհի վրա, ներքևի կողմից, որպէս զի անտառից գերաններ դուրս բերելիս, գերանը չը գլորվի, ընկնի ձորը. աջ և ձախ ընկած են բազմաթիւ գերաններ, երևում են բազմադարեայ ընկուզենիների, լորենիների կտրած կոճղներ, այստեղ, այնտեղ երևում են տախտակի գործարանների հետքեր, այստեղ այնտեղ թափված են ամբողջ տախտակներ, գերաններ, որոնք գնողին դուր չեն եկել, ուստի և նորն է կտրել—տարել։ Տեղ տեղ անտառը բոլորովին երորդուած էր։ Բացի դրանից շատ էին և ածխահորերի թիւը։ Ամեն քայլափոխում երևում է կացնի աւերիչ գործունէութիւնը։ Եւ այս բոլորը կատարվել է մի քանի ամիսների ընթացքում վանահօր տգիտութիւնից։ Տգիտութիւնից ենք ասում, որովհետև հ. Վահանը իր բոլոր գործերը յանձնել է թուրք անտառապահ Նաւթալիին, իսկ ինքը շրջում է Գետաբէկ, Գօրելովկա, Սլաւոնկա և այլ գիւղերում և, ինչպէս ասում են, զբաղվում է քէֆերով։ Իսկ այդ միջոցին վերոյիշեալ Նաւթալին իր գործը տեսնում է,—կտրտում է անտառը, ծախում, ծախծխում է և օգուտի մի ամենափոքր մասը յանձնում է հայր Վահանին, իսկ մնացածը իր գրպանն է դնում։ Իր կողմից հայր Վահանը նոյն օպերացիան է կատարում իր ստացած փողերի վրա Էջմիածնի վերաբերմամբ։ Բացի դրանից վերոյիշեալ Նաւթալին տարել է իր մօտ վանքապատկան կովերը և ահա մի քանի ամիս է ինքն է նրանից օգտվում և մինչև անգամ չէ համաձայնվում վանքին վերադարձնել այդ կովերը, պատճառաբանելով, որ իրան են պատկանում. ի հարկէ եթէ հայր Վահանի նման մէկը լինի վանքի կառավարիչը՝ վանքի կովերն էլ կը պատկանեն թուրք անտառապահին։ Այս բոլորից յետոյ ինչ սպասենք հայր Վահանից...

Արժ. հ. Կորիւնը սաստիկ դժգոհ մնաց Զարեքի վանահօրից նրա գործած աւերածութիւնների համար։ Նա ասաց, որ շուտով վանահօր գործած զեղծումները քննելու համար քննիչի պաշտօնով Գետաբէկ կը գայ Ղազախ քաղաքի ծխատէր քահանայ Զաքարեանը։

Յունիսի 27-ին հ. Կորիւնը վերադարձաւ Էջմիածին։

Ստ. Մանասեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յունիսի 29-ին

Կարդալով «Մշակ»-ի № 133-ում Շուշուց հաղորդած այն լուրը, որ վերաբերում է ամսիս 20-ին կայացած «Արշակ» Բ. ներկայացմանը, բարոյական պարտք ենք համարում ասելու հետևեալը։

ա) Աֆիշայի մէջ «արտիստ» բառը չը կար, ինչպէս այդ կը տեսնէք նամակիս հետ ներփակված աֆիշայից։

բ) Աֆիշայի մէջ չէ գրված «Բաքաղազարեանը», այլ թէ պ. Բալայեանը։

և գ) Պ. Բալայեանը ոչ մի ժամանակ չնչին դերերում չէ դուրս եկել դերասանների հետ, այլ երկրորդական համեստ և իր ուժերին համապատասխան դերերում է միշտ դուրս եկել բեմ և գրեթէ միշտ աչքի է ընկել և արժանացել թէ ծափահարութեան և թէ նուէրների՝ շնորհիւ իր մտածված խաղի։

Ստորագրութիւններ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին Պետերբուրգից ճանապարհ կընկնի այսօր, յուլիսի 5-ին, դէպի Կովկաս և կը հասնի Թիֆլիս ուրբաթ, յուլիսի 11-ին.

—

«Бирж. Вѣд.» լրագրին հաղորդում են Սիմֆերոպոլից, թէ Թիւրքիայից այդ քաղաքը գնացած երկու հայեր հրապարակաբար սպանեցին երկու թուրքի։ Սպանութեան շարժառիթը վրէժխնդրութիւնն էր։

—

Արդարադատութեան մինիստրութեան մէջ հարց է բարձրացրած նահանգական դատարան հիմնելու Բաթումում։ Դատարանի գործունէութեան սահմանների մէջ կը մտնեն Բաթումի, Սուխումի շրջանները և Սև-ծովեան նահանգը։

—

«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ առաջիկայ ուսումնարանական տարեշրջանի ընթացքում, Պետերբուրգի համալսարանի արևելեան լեզուների բաժանմունքում, պրիվատ-դոցենտ իշխան Ջավախով կը կարդայ դասախօսութիւնների մի նոր կուրս,—«Փէօդալների և արքայական իշխանութեան մրցութեան պատմութիւնը Վրաց թագաւորութեան մէջ»։

—

Թիֆլիսի սանիտարական-բժշկական տեսուչ Գ. Ստեփանեանն կազմել է մի նախագիծ քաղաքի սանիտարական-բժշկական մասը հիմնական բարեփոխութիւնների ենթարկելու վերաբերմամբ։ Նախագիծը կարճ ժամանակից յետոյ կը ներկայացնվի ուպրավային։

—

Մօտ օրերումս Թիֆլիսի Միքայէլեան արհեստաւորաց ուսումնարանի չորրորդ դասարանի աշակերտները, դպրոցի դիրեկտոր Պօբեդիմօվի ղեկավարութեամբ, կուղևորվեն Մոսկվա՝ այդ քաղաքի նշանաւոր տեղերն և հիմնարկութիւնները տեսնելու համար։ Դիրեկտոր Պօբեդիմօվի բացակայութեան ժամանակ՝ նրա պաշտօնը ժամանակաւորապէս կը կատարէ ուսուցիչ Մելիք-Ալլահվէրդեան։

—

Պետական փոխատու - խնայողական դրամարկղների վարչութիւնը որոշել է այդ դրամարկղների բաժանմունքներ բանալ, ի միջի այլոց, նաև Անդրկովկասեան երկաթուղու Աղին և Կամնկա կայարաններում։

—

Զինուորական մինիստրութեան մէջ բարձրագոյն հրամանով կազմված էր մի մասնաժողով քննելու և բարւոքելու այն բանւորների դրութիւնը, որոնք աշխատում են զինուորական մինիստրութեան զանազան հիմնարկութիւններում։ Ռուսաց լրագիրները այժմ հաղորդում են, որ յիշված մասնաժողովը արդէն կազմել է իր զբաղմունքների ծրագիրը, որը և հաստատվել է կառավարութիւնից։ Այդ ծրագիրը շատ ընդարձակ է և շօշափում է բանւորների կենցաղը իր բոլոր մանրամասնութիւններով։

—

Նովգորոդի նահանգական զէմստվօն միջնորդութիւն էր յարուցել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առաջ, որով խնդրում էր Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտում ընդունել ուսանողուհիներ աւելի մեծ թւով, քան ընդունվում է այժմ։ Այս միջնորդութեանը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը պատասխանեց, թէ կանանց բժշկական ինստիտուտի ուսանողուհիների շտատն աւելացնելն այժմ անհնար է, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ինստիտուտի շինութիւնը չէ կարող իր մէջ տեղաւորել աւելի մեծ թւով ուսանողուհիների, իսկ նոր ինստիտուտ հիմնելու համար կը պահանջվէին ահագին գումարներ պետական գանձարանից և այս բանի վրա յոյս դնել չէ կարելի, որովհետև 1895 թւի յուլիսի 1-ին տեղի ունեցած Բարձրագոյն հրամանի մէջ Պետերբուրգում կանանց բժշկական ինստիտուտը հիմնելու մասին ասված է, որ կանանց կրթութիւնը կարող է տարածվել միայն հասարակական և մասնաւոր նուիրատուութիւնների միջոցով։ Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թէ պէտք է արդեօք կանանց ընդունել են համալսարանների բժշկական ֆակուլտէտներում, առ այժմ չէ կարելի ոչինչ որոշ բան ասել, որովհետև այդ հարցը կը վճռվի համալսարանական նոր կանօնադրութիւն կազմելիս։

—

ԴՈՆԱՒԱՐԶ գիւղից (Շուշու գաւառ) գրում են մեզ. «Յունիսի 25-ին կարկուտը ոչնչացրեց մեր գիւղի և Խաչմաղ գիւղի արտերի մի մասը և հողին հաւասարացրեց ամեն ինչ։ Սրանով չորս անգամ կարկուտ է եկել այս տարի։ Էլ ինչ հնձէ խեղճ գիւղացին, էլ ինչով ապրէ։ Այսօր մեր գիւղացին վիզը ծռած, ձեռքը ծոցումն է մնացել. եւրոպացին իր կարովի խելքով աշխատում է թնդանօթի միջոցով հեռացնել իրանց բնական այդ պատահարը, մենք ասիացիներս, ողորմելի հաւատքով դիմում ենք մի այլ անզօր միջոցի։ Մեր գիւղի դիմաց մի բլրի վրա (որ Մատաղա խութէ կոչվում) մի հին կաղնու տակ դարսել են քարեր ու մէջը մի ժանգոտած ու կոտրված խաչ են դրել, որպէս զի այդ նոր սուրբը, կարկուտից ազատէ հանդ ու հանդաստանը. հրաշալի թնդանօթ— և այսպիսով մեր գիւղի քսակահաշիւ ուխտատեղիների վրա աւելացել է և մէկը։ Դոնաւարզցիները դիմել են կառավարութեանը, խնդրելով, որ այս տարվայ հարկերի կէսը թողնեն եկող տարվան։»

—

Բորչալուի գաւառի ԴՍԵՂ գիւղից գրում են մեզ հետևեալը. «Անցեալ տարի այս ժամանակ Դսեղի բնակիչները շատ գոհ էին բերքից իսկ այս տարի բոլորովին հակառակը։ Մայիսի 27-ին և յունիսի 5-ին կարկուտը փչացրեց մեր գիւղի բոլոր հացաբոյսերը, որի մասին յիշված էր «Մշակի» № 121, 124 և 125 համարներում, միայն սարերի խոտերն են մնացել անվնաս, Դսեղի խեղճ ժողովուրդը մնացել է մոլորված, թէ այս տարի ինչ պէտք է անի, որ իր ընտանիքը կերակրի. նա մի և նոյն ժամանակ ստիպված պէտք է լինի գնել նաև սերմացու ցորեն, որ գոնէ առաջիկայ տարին ապահովված լինի հացի կողմից, եթէ վրա չը հասնի մի որ և է նոր փորձանք։ Գիւղացին այժմ մտածում է միայն անասունների պահելու մասին, որ չը կոտորվեն սովից։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սերբիական ազատամիտ կուսակցութեան օրգան «Српска Застава» լրագիրը շատ մռայլ գոյներով է նկարագրում Սերբիայի այժմեան ֆինանսական դրութիւնը։ «Կործանված րէժիմը,—ասում է լրագիրը,—զարհուրելի հետքեր թողեց պետական օրգանիզմի վրա, իսկ պետական ֆինանսների վրա նա ներգործեց ուղղակի աւերիչ կերպով։ Բոլորովին անհաւատալի է թւում այն թեթեւամտութիւնը, որով վատնվում էին միլիօնները։ Բոլոր մնացած վնասները մենք կարող ենք ուղղել հեշտութեամբ, բայց ֆինանսական դրութիւնը բարւոքելու համար հարկաւոր կը լինի գործ դնել հսկայական աշխատութիւն և երկար ժամանակ։ Ֆինանսական գործերում, կարծես, ամեն ինչ դիտմամբ խճճված է, որպէս զի անկարելի լինի ծայրը ծայրին հասցնել։ Մինչև մայիսի 29-ը Ալէքսանդր թագաւորը Սերբիան համարում էր իր անձնական կալուածքը և կառավարում ու վարվում էր նրա հետ այնպէս, որպէս ցանկանում էր։ Դա մի այնպիսի ժամանակ էր, որ արքունիքին մօտիկ ամեն մի անձնաւորութիւն յարձակվում էր գործում պետական գանձարանի վրա, ինչպէս կատաղած գազան և կողոպտում էր նրան, որքան և ինչպէս կամենում էր։ Ֆինանսների մինիստրութեան մէջ կային այնպիսի մարդիկ, որոնք միայն աջակցում էին այդ անսահման յափշտակութեանը։ Նախկին կառավարութիւնը իր ֆինանսների հրէշաւոր մինիստրի հետ անցնում էր ամեն չափ ու սահմանից... Եթէ,—Աստուած մի արասցէ,—նախկին կառավարութիւնը մնար իր պաշտօնում, Սերբիան անդարձ կը կորչէր ֆինանսական կողմից։

—Ինչպէս հաղորդում են «Temps» լրագրին Կ. Պօլսից, սուլթանը հրատարակել է մի իրադէ, որով պատուիրվում է արձակել օգնական զօրքեր Կոսսովի վիլայէթում և նշանակել երկու մասնաժողով՝ Ադրիանոպոլսի վիլայէթում րէֆօրմներ մտցնելու համար։ Սուլթանը մօտ օրերումս հրաւիրեց մինիստրներին ժողովի՝ քննելու համար իրերի ներկայ դրութիւնը։ Ժողովի ժամանակ յայտնվեց, որ թէ մինիստրները և թէ ժողովին մասնակցող միւս բարձրաստիճան անձինք այն աստիճան զայրացած են Բուլղարիայի դէմ, որ կարևոր են համարում անմիջապէս պատերազմական գործողութիւններ սկսել։ Անկասկած է, որ միայն սուլթանի սառնասրտութեան պէտք է վերագրել այն հանգամանքը, որ ժողովականների ցանկութիւնները չիրականացան և գտնվեցին միջոցներ մէջ տեղից վերցնելու պատերազմի անխուսափելի վտանգը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 յուլիսի

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐ։ Պեկինից հաղորդում են, որ Չինաստանը երկու միլիօն տաէլի փոխառութիւն է արել ռուս-չինական բանկից։ Տօկոսների փոխարէն առաւելութիւններ են տրված չինական Թուրքեստանում։ Կորէայի կայսրի յօբելեանը յետաձգված է վատ հունձի պատճառով։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ասում են մանջուրական հարցի վերաբերմամբ խորհրդակցութիւն է տեղի ունեցել պետական քարտուղարի և ռուսաց հաւատարմատարի մէջ, որ և միանգամայն բաւարար հետևանք է ունեցել։

ԿԻԵՎ։ Գիշերվայ ժամը 12-ին Տրօյիցկի հրապարակում մի երիտասարդ անցորդ ատրճանակ արձակեց քաղաքապահի վրա և արագ անյայտացաւ։ Քաղաքապահը լուրջ վիրաւորված է ազգերից։ Նրա դրութիւնը վտանգաւոր է։

ԲՈՐԻՍՕԳԼԷԲՍԿ։ Երէկ այստեղ եկաւ երկաթուղիների գլխաւոր տեսուչ Գորչակօվը, որը բացատրութիւններ ընդունեց Բորիսօգլէբսկի արհեստանոցների արհեստաւորներից։ Արհեստաւորները անդադար չարունակում են աշխատանքները։

ՍԱՄԱՐԱ։ Յուլիսի 2-ին Պոկրօվսկի Թաղում հրդեհ բռնկվեց։ Ոչնչացել են 500 տուն և հացի բոլոր ամբարները։ Մարդկային զոհերի թիւը 5 է։ Վնասը մօտ 7 միլլիոն է։ Հրդեհի պատճառը պարզված չէ։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիայի և Պարսկաստանի առևտրական դաշնագրութեան համեմատ, որ հաստատվել է մայիսի 14-ին, իւրաքանչիւր կողմին տրված է ամենաբարեացակամ պետութեան իրաւունքներ։ Ոչնչացնվում է պարսկական արտահանութեան 5-տոկոսեայ մաքսը փոքրիկ բացառութեամբ բոլոր ապրանքների համար, նոյնպէս և բոլոր տուրքերը քարաւանային ճանապարհների պահպանութեան համար։ Ոչնչացնվում է մաքսերը կապալով տալու սիստեմը և դրա փոխարէն հիմնվում են պետական մաքսատներ՝ պահեստատներով ապրանքներ պահելու համար։ Դաշնագրին կցած յայտագրով Պարսկաստանը ապահովեցնում է անգլիական ապրանքների մաքսի պակասեցնելը այն չափով, որքան որ տրվում է Ռուսաստանից ներմուծվող ապրանքներից։

ՀՌՈՄ։ Պապի առողջական դրութիւնն անփոփոխ է։ Նա գիշերն անցկացրեց անքուն։ Նկատվում է չնչառութեան արագացում—կրծքի խոռոչում հեղուկի աւելանալու պատճառով։

ԲԷԼԳՐԱԴ։ Սերբիական դեսպանները Լօնդօնում, Պարիզում և Աթէնքում հրաժարեցրած են։ Դեսպանական պաշտօնները Լօնդօնում և Աթէնքում ոչնչացրած են։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Կօշուտի կուսակցութեան կազմած խորհրդակցութեան ժամանակ նա յայտնեց, որ իր վրայից վերցնում է կուսակցութեան պարագլխի կոչումը։ Փոխ-նախագահն էլ յայտնեց, որ հրաժարվում է։ Կօշուտ իր հրաժարականը բացատրում է այն հանգամանքով, որ կուսակցութեան կողմնակիցների մի մասը չէ կատարել օբստրուկցիան դադարեցնելու մասին եղած որոշումները։

4 յունիսի

ՄՕՍԿՎԱ։ Վվեդէնսկի հրապարակի վրա հիմք դրին առաջին քաղաքային ժողովրդական Թատրոնի՝ լսարանով—800 ունկնդիրների համար։

ՀՌՈՄ։ Պապի թուլութիւնն աւելանում է. յանկարծակի կատաստրոֆի վտանգն աւելացաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԽՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Գուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզատու. հիւանդ.
ՁԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԶԱՆԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՕՆԵՐԸ

Ն. Ն. ՌՕՍՏՕՄՊԵԿՕՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։
Լ. Վ. ԲԱՐՏՕԼԴ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ) ներքին և վեներական հ.
ԻՒՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—8—8½ ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Ե. Տ. ԱՌՎԱՆԻՏԵԱԿԻ—տունը. Ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Հ Ր Ա Ւ Է Ր

Կիրակի, յուլիսի 6-ին, ժամը 11-ին, ս. Հրեշտակապետաց եկեղեցում ս. պատարագից յետոյ կայանալու է երրորդ և վերջին ժողով, ղպրոցաւարտ Բուղդան Բեքբենեանցին ընդունելու հոգևոր կոչման մէջ, ուստի պ.պ. ծխականները հրաւիրվում են ներկայ լինելու նոյն ժողովին։

Նախագահ՝ Եզնիկ քահ. Ալխազեան

Մեզ մօտ վաճառվում է
ՐԱՖՖԻԻ

«Սամուէլ», Ա., Բ. և Գ. գիրք, գինն է	3—50
«Խէնթ և Ջալալէդդին» մի գրքի մէջ, գ.	2—50
«Ոսկի Աքաղաղ», երկու մասից, գ.	1 —
«Վէպիկներ և պատկերներ», I և II հ. գ.	4 —
«Խաչագողի յիշատակ.», I, II, III և IV հ.	2—50
«Խամսայի Մելիքութիւնները», գ.	2 —
«Մինը այսպէս. միւսը այնպէս», պատկերազարդ, գ.	1 —
«Ջահրումար», գ.	2 —
«Տաճկահայք», գ.	— 50
«Կայծեր», հատոր առաջին, գ.	2 —
«Արծիւ Վասպուրականի», գ.	— 70
«Կայէնի կտակը», (Թարգմ. Րաֆֆիի) գ.	1—20

Նաև Աբովեանի, Ծերենցի, Պռօշեանի, Լէոյի, Աղայեանի, և այլ զանազան հայերէն հեղինակութիւններ։

Դիմել՝ Баку. Оганнесу Газанчіанцу. 1—4

Ճեմարանի երկու ուսանող

յանձն են առնում աշակերտներ պատրաստել ճեմարանի, թեմական դպրոցների և ուրիշ ուսումնարանների համար՝ բոլոր առարկաներից և աժան վարձով։ Ցանկացողները թող դիմեն հետևեալ հասցէով. Великокняжеская улица, № 19, пансіонъ Кочарянца. 1—3

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԱՐԱԲԻ
Գերբնական հիւանդութիւն
(Պօէմա)
Գինը՝ 20 կոպ.

Դիմել. Թիֆլիս, Կենտրոնական գրավաճառանոց, կամ՝ Тифлисъ, Бебутовская, 27, кв. № 8, Араби. 1—3

ԲԺԻՇԿ
Պ. Մ. ԱՖՐԻԿԵԱՆ
հաստատեալ ի Վիէննա, կառաջնորդէ հիւանդներին գալոց հոկտեմբերին Թիֆլիսից արտասահման՝ օպերացիաներ անելու համար։ Մանրամասն նամակով.

Dr. P. Afrikian. Wien. Langesgasse, 60. 7—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ
ամառս ընդունում է հիւանդներ Պեատիգօրսկում։
Армянская ул.' д. Паджановой.
(չ. ու. շ.) 8—20

Լոյս տեսան
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ՎԱՀԱՆ ԹԱՒԱՐԲԷԳԵԱՆԻ
Գինն է 50 կ.
Պահեստ՝ Թիֆլիս, Կենտր. գրավաճառանոց։ 2—3

ԳՈՒՏՏԵՆԲԷՐԳ
գրախանութում վաճառվում են

Գաղտնիք Փարիզու, Էօժէն Սիւի, 8 հատ.	10 ր.
Բրաժլօն Դեբրակոնա, Ալ. Դիւմայի, 12 հ.	12 ր.
Սանդուխտ Դշխոյի և կուսի պատարագ, Գ. Պատկանեանի	25 կ.
Զաւէն և Փառանձ Առաջին »	60 կ.
Անիծեալը, Արբայի, 4 հատոր,	4 ր.
Կամելիազարդ տիկին, Ալ. Դիւմայի	1 ր.
Մաթիլդ կամ նորատի կնոջ մը յիշատակարանը, 4 հատոր,	6 ր. 40 կ.
Նոտր-Դամ Փարիզի։ Վ. Հիւգօյի 3 հատոր	3 ր. 75 կ.
Լուծեալ սէր, Բէնիամին Եղիազարեանի	80 կ.
Խաչ և ծեփիչ, վերջին ժամանակներէն վէպ մը, Թարգմ. հ. Գաբր. Մէնէվիշեան	1 ր.
Փէրնանտ, վէպ. Ալ. Դիւմայի, Թարգմ. Արփիարեանի	1 ր. 50 կ.
Ամուրիի մը երազները կամ սրտի գիրք մը, Թարգմ. Մ. Մամուրեան	1 ր. 20 կ.
Երեք հրացանակիրք, Ալ. Դիւմայի, երեք հատ. Թարգմ. Մ. Մամուրեանցի	4 ր. 50 կ.
Կնոջ մը վէպը, Ալ. Դիւմայի որդու, երեք հատոր, Թարգմ. Կուռնելեա Տ. Սօֆեալի	3 ր.
Լէօն Լէօնի, Ժորժ Սանդի, Թարգմ. Գ. Մսերեանի	1 ր. 20 կ.
Հայկական նամականի, գրեց Վրոյր	1 ր. 50 կ.
Անգլիական նամականի, կամ հայու մը ճակատագիրը, Մ. Մամուրեանի։	2 ր.
Մանօն Լէսքօ, Թարգմ. Զիլինգարեանի,	1 ր.

Դիմել. Книжный магазинъ „Гуттенбергъ„, (Дворцовая). Г. Галустяну. 3—3

Լոյս տեսաւ
Ս. ԹԱՌԱՑԵԱՆՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԻԴԷԱԼԻՍՏ
ՇԻԼԼԷՐ

Կենսագրական - քննադատական աշխատութիւններ, բաղկացած 448 մեծադիր երեսներից, ընտիր թղթի վրա, 91 ցինկօգրաֆ-աւտոտիպ պատկերներով (չը հաշւելով զարդանկարները)։ Գինն է 3 րուբլի, մէկ փառահեղ կազմի մէջ՝ 4 ր., երկու կազմի մէջ՝ 5 ր.։ Ճանապարհածախս 60 կօպ.։ Առաջին հատորը այլ ևս չէ ծախվում.

Մամուլի տակ է նոյն հեղինակի
«ԹԱԳՆՎԱԾ ԿԱՅԾԵՐ»
դրաման
11 լուսանկար-պատկերներով

Բաժանորդագինն է 1 րուբլի։ Թէ գրքերի և և թէ բաժանորդագրութեան համար դիմել հայ գրավաճառներին։ 7—10

Թիֆլիսի Սիօնի եկեղեցու մօտիկ, Վինիի բեադում, Կորխմազի Քարավանսարայի տեղում, նոր կառուցված է չորս յարկանի շինութիւն, որ ունի պօդվալներ, ամբարներ և կօնտօրներ բացելու տեղեր, նաև ճաշարան իր խոհանոցով, որ

ՏԱԼԻՍ ԵՆՔ ՎԱՐՁՈՎ,

թէ ամսով և թէ տարով։
Երրորդ և չորրորդ յարկերում բացված է
„ԱՐԱՔՍ“
հիւրանոց՝ կահաւորված սենեակներով։ Գները շատ մատչելի են։
Կառավարիչ՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐԵԱՆՑ
3—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՕՐ. Մ. ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆ
ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ,
ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԻ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ
81—105

Ֆինանսների մինիստրութիւնից հաստատված
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
երկու սեռի անձանց համար
[*Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова*]

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն՝ առևտրական, արդիւնաբերական-գործարանական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղուած ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայն օր, կուրսերում՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, Учредителю Коммерческихъ Курсовъ А. И. Теръ-Каспарову. (և. չ.) 1—25

CONSTIPATION
PILULES DE
CASCARA
MIDY
Midy
CASCARA-MIDY

ՊԻԼԻՒԼՆԵՐ
CASCARA MIDY
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ժողովրդական միջոց

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Չափը—2 պիլիւլ երեկոյեան, պառկելուց առաջ։
CASCARA MIDY (Կասկարա Միդի) չէ առաջացնում ստամոքսի մէջ ցաւեր, սրտի խառնում, կամ փորլուծութիւն։

Դեղատուն Midy, 113, faubourg, St-Honoré, Պարիզ, Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։ (19, 26, յ. 3, 17, 30 յլ. 14, 28 օ. 11, 25 ս. 9, 23 հ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (ո) 2—12

Ա Ճ Ո Ւ Ր Դ

Սանահին պլատֆորմից մինչև Սանահնի վանքը պիտի շինվի կառքի ճանապարհ, որ տրվում է ԿԱՊԱԼՈՎ։ Աճուրդը նշանակված է յուլիսի 10-ին, առաւօտեան ժամը 10-ին, Թիֆլիսի վիճակային կօնսիստօրիայում։ Պայմանագրի և յատակագծի հետ ծանօթանալ ցանկացողները կարող են դիմել նոյն կօնսիստօրիայի դիւանապետ Բ. Այվազեանին, ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից։

Մասնաւոր բացատրութիւնների համար դիմել Սանահնի վանքի վանահայր սրբազան Սաթունեան եպիսկոպոսին։ Հասցէն.—Почтовое Отдѣленіе Алаверди (Тифл. Губ.)
3—3

SANTAL
MIDY

ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
ԹՈՅԼ Է ՏՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս կապսուլների մէջ պարունակված զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել [illegible] (գաղտնի հիւանդութիւնների) դէմ, կապայ-բալզամի և կուբեբայի փոխարէն։ Նա ներգործում է աւելի արագ, չէ յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չէ պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կլտիկը։
Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսուլի վրա սև տառերով դրոշմված լինէր։ MIDY
Պահեստը Ռուսաստանի գլխաւոր դեղատներում

(5, 10, 15, 20 և 25) 27—60

Дозволено Цензурою. Тифлисъ, 4 Іюля 1903 г.
Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванская ул.